Արձանագրություն 02

«ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԷԱ-ԱՊՁԲ-41/25» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Գյումրի

11 սեպտեմբերի, 2025թ., ժ 16:00, ք. Գյումրի, Վարդանանց հրապարակ 1, Գյումրու համայնքապետարան

Հանձնաժողովի նախագահ՝

1) Ավետիս Առաքելյան – Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ,

Հանձնաժողովի անդամներ՝

2) Դմիտրի Մանվելյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ,

3) Դավիթ Հարությունյան - բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի գլխավոր մասնագետ

4) Վարդան Զարիֆյան – բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի առաջատար մասնագետ,

5) Հրաչիկ Վարդանյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ,

1. «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԷԱ-ԱՊՁԲ-41/25» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնումների միջոցով առաջարկների բացման վայրի, գնային առաջարկների ներկայացման, գնահատման, արդյունքների հաստատման /մրցույթի արդյունքների ամփոփման/ մասին

1. Ընդունել ի գիտություն, որ՝

1.1 Գնային առաջարկ ներկայացնելու մասին 25.08.2025թ. էլեկտրոնային եղանակով ընթացակարգի հրավերի տեքստերը միաժամանակ հրապարակվել է www.gnumner.am և www.armeps.am ինտերնետային կայքերում:

1.2 Գյումրի համայնքի կարիքների համար «Աղբատար մեքենայի» ձեռքբերման համար «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԷԱ-ԱՊՁԲ-41/25» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնումների համաձայն գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

N	Անվանումը	Հասցե
1.	Արման Ադամյան ԱՁ	-
2.	ԲԵԳՄԻՔ	ՀՀ, Սյունիք, Սիսիան, Գետափնյա փող, 9 տ.
3.	ՍԱՆՆԻ ՄՈԹՈՐՍ ՍՊԸ	Արարատի մ. գ. Ոստան Արարատյան փ. 12ա
4.	ՄԻԿԱՐ ՄՈԹՈՐՍ ՓԲԸ	ՀՀ, ք. Երևան, Արտաշատի խճ. 2/4
5.	Ռաֆ-Օջախ ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 112
6.	Արամուս ՍՊԸ	գյուղ Արամուս

1.3 Գնային առաջարկ պարունակող հայտերը բացվել են www.armeps.am էլեկտրոնային կայքի միջոցով:

1.4 Տվյալներ հայտերի ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին.

- Գնային առաջարկ ներկայացրած մասնակցի կողմից ներկայացրած հայտը կազմվել և ուղարկվել է հրավերի պահանջներին համապատասխան:

1.5 Տվյալներ հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

- գնային առաջարկ ներկայացրած մասնակիցը ներկայացրել է գնման ընթացակարգին մասնակցելու դիմում, գնի առաջարկ և հրավերով պահանջվող հավելվածները:

1.6. Մասնակցի առաջարկած գինը

ՀՀ դրամ

N	Ապրանքի անվանում	Արման Ադամյան ԱՁ		ԲԵԳՄԻՔ		ՍԱՆՆԻ ՄՈԹՈՐՍ ՍՊԸ		ՄԻԿԱՐ ՄՈԹՈՐՍ ՓԲԸ		Ռաֆ-Օջախ ՍՊԸ		Արամուս ՍՊԸ		Նախահաշվային գին
		առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Ընդհանուր գին
1.	Աղբի մեքենա	5 000 000	**6000000**	37500000	45000000	43330100	51996120	43333222	51999866.4	43333332	51999998.4	52000001	62400001.2	**52000000**

Հանձնաժողովը արձանագրեց՝

- «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԷԱ-ԱՊՁԲ-41/25» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի մասնակցության հայտ են ներկայացրել 6 մասնակից, նվազագույն գին է առաջարկել Արման Ադամյան ԱՁ-ն:

- Արման Ադամյան ԱՁ-ի հայտում բացակայում է հայտի ապահովումը, փաստաթղթերը հաստատված չեն:

- ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն, մեջբերում եմ՝ «Հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը, կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը»:

Հանձնաժողովը որոշեց՝

- Արման Ադամյան ԱՁ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն:

- Էլեկտրոնայիին աճուրդը հայտարարել չկայացած:

- Արման Ադամյան ԱՁ-ի տվյալները ուղարկվելու են ֆինանսների նախարարություն՝ Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0

Հանձնաժողովի նախագահ՝ ---------- Ավետիս Առաքելյան (ԳՊ/ԳԱՊ)

Անդամներ՝ ---------- Դմիտրի Մանվելյան (ԳՊ/ԳԱ)

---------- Դավիթ Հարությունյան (ԳՊ/ԳԱ)

---------- Վարդան Զարիֆյան (ԳՊ/ԲԱ)

---------- Հրաչիկ Վարդանյան (ԳՊ/ԲԱ)

Քարտուղար՝ ---------- Արմինե Սարգսյան (ԳՊ/ՄՀմ)